

նեւ շունք բազումի եւ
ժողովք չարաց պաշտեւ
ցին զիս . ծակեցին շնէ
ու իմ և զոսս իմ եւ Ք
խանակ լեզուոյ(43) իհայ

(շար. գ. Եջին ա. սիւնակը)

աշակեցին ադայն .
ուերէ իմ , լուր ինչ Տեր լուր
ձայնի իմում եւ ը
հաւ զողիս(44) իմ ի ժողո
ւ առը զաւրականին
+ որ երեւեցան նորա
իւր դաստակերախն քո
և որ կըսերս եւ(45) յամե
աւեւան ողորմութիւն ք
+ էթացեալ յառաջե
շաշ զիս , եւ զայս իբր
և ասաց ոչ եւս կարէր
բանալ զբերանս յանհնա
բնա պրկոցաց զելարա
ան եւ անդէն վաղվա
շահի դահիճքն հրաման
աւեալ յերից նախարա
բայն սրով հատեալ զ
ուրանոց երանելոյն ըն
իւցին զմարմինն ի խոր
իւրատ մի ցամաք , եւ ան
դէն չ տեղւոյն սկսաւ խաւ
ուլ գենշապուհ եւ ասէ
շեղիսկոպոսն . յորժամ
էին եւ յաշխարհս Հայոց
շարէ մի և զվեց ամիսս
ևնու շրջել ինձ անդ ոչ
աշմէ ես ամենելին ե

(շար. գ. Եջին թ. սիւնակը)

թե բան մի տրտունջ լուա
յ յումեքէ վասն քո . սոյն
պէս եւ առաւել վասն թո
վսեփայ . զի դա իսկ էր ի
շխան ամենայն քրիստո
նէից և հաւատարիմ

յամենայն իրս արքունի .

նաեւ(46) որ մարզպան աշխար
հին լեալ էր յառաջ քան
զիմ երթալն մեծապէս
զոհ էր զառնէս զայսմա
նէ եւ ես ինձէն իսկ ա
շաւք իմովք տեսանեկ
զի իբրեւ հայր(47) համարե
ալ էր հաստատուն ամեն
նայն աշխարհին եւ ա
նաշառութք . սիրեր
զմեծամեծս եւ զփոքու
նս . արդ փոխանակ ընդ
ձեր ես աղաչեմ զձեզ .
ինայեցէք ի պատուական
անձինս ձեր , եւ մի մատ
նիք ի մահ չարչարանաց
ըստ առաջնորդն կարզի
զոր տեսէք աշաւք ձերո
վք . քանզի եթե ի դոյն
միտս յամառութեան
կայք եւ իմ եղեալ ի մը



ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՆՇԱՐՆԵՐ

Խ Ա Բ Ա Զ Ա Ը

(Յավի. Բ. 15, Վանակ. Հց. Երզ. Քեր. Նաննա)

Մեր մատենագիրներէն Վանական քրդ .
իր Հարցմունք եւ Պատասխանի զրքին , ինչ-
պէս նաև Յովհաննէս Երգնկացի իր Թերա-
կանուրեամ Մեկնուրեամ մէջ խարազան բա-
ռը կը մեկնեն ըսկելով « խարազան որ է
վարէչ իշոյ » , « խարազան՝ իշավար ասի
պարսիկ լեղուով » : Բառ կը յիշուի Յովի .
Բ. 15 համարին մէջ , Նոննոս եպս .ի Յա-
դաց Առասպեկաց « զրքին հայկական հին
և ընտիր թարգմանութեան մէջ ես կը յի-
շատակուի :

Խարազան բառը պարսկերէն է և կը
նշանակէ և էլ քչելու զործիք » , ինչպէս
Վանական քրդ . Նոյնպէս հիներէն Գրիգոր
Մագիստրոս այդպէս հասկցած են : Խա-

(43) « բերանոյ » . (44) « զողիս » . (45) « եւ » :

(46) « նո եւ » . (47) « նոյն հաստատուն համարեալ եւ » :

բազմը բարդ բառ մ'է, կազմուած խար (էշ) և զեհն (զարնել) պարսկերէն բառերով։ Հ. Աճառեան իր Հայերէն արմատական բառաբանին մէջ (Դ. Հատոր) կը յիշատակէ նոյն բառին այլ և այլ ուղղագրութեամբ և նշանակութեամբ գաւառական բառեր, ինչպէս խարեզան (Է.ան) խարիզան (Սալմաստ), խարզան, խարով բարզուած բառեր կան նաև հայերէնի մէջ, ինչպէս, խարբանդակ՝ որ գործածուած է Ասկենտիդի մէջ, իշալար նշանակութեամբ, խարուց (սէշ այծնամօ) (Օր. Ժ. 5), խարուանդայ («շորեարան» և «իշալար»), մէկ անգամ գործածուած է (Տե՛ս Ուռիայցի, էջ 427)։ Խար բառով պարսիկ լեզուին մէջ կազմուած են բազմաթիւ ուրիշ բառեր (տե՛ս Պարսկերէն Բառարան Պալացի Դիորդ Դիքի)։

Խարագան բառին պարզ ստուգաբանութիւնը վերև տուինք. բայց մենք աւելի կ'ուզենք պարզել նոյն բարզութեան առաջին բառը՝ որ է խար կամ խարա, էշ նշանակութեամբ։ մինոյն ժամանակ ըմբռանելու թէ Հայերը և Պարսկեները հնագոյն դարերու մէջ ինչ կը հասկնային խար կոմ խարա բառով, և ինչ տեսակ առասպելական կենզանի մ'էր ան, և ինչ զիցարանական և բներեսութեական խմաստ կը պարունակէր, հետեւելով փարսի ժողովը Բանդահիս (Մննդոց) զրոց մեկնարանութեան և նոյն զրոց անգղ.ի թարգմանիչ Westի ծանօթագրութեանց։

Ավեսդայի մէջ յիշատակուած է Khara (խարա) իրը եռոտանի էշ։ Երանակէտ Prof. Darmesteter իր Ormazd և Ahriman գործին մէջ (էջ 148-151) khara կը նկատէ իրը օգերեսութական գիք մը, ամապերու և փոթորիկի անձնուորութիւն մը, և անտարակոյս, կը յարէ, թէ վառ երեակալութիւն մը կրնայ յայտնի նմանութեան հետք մը գտնել քանի մը առասպելական կենդանիներու ստորոգելեաց և բնական երեւոյթներու նկատմամբ մէկ քանի մտացածին մտացարներու միջներու մէջ է, և նաև վստահ ըլլալ թէ այդ մտացածին գաղափարները հին Զրադաշտականները իրապէս կը պաշտպանէին։ Բայ նոյն հեղինակին, ուրիշ հաւանական տեսութիւն մը սա է թէ իւրաքանչիւր գիցարանական իրողութիւն կը նկատուի քըր-

մութեան կողմէն քաղաքական պատճառանիրով թոյլատրուած օտար գիք մը, իր արժանաւոր առաւելադոյն յարգանքի, այսպէս Անահիտ աստուածուէին թոյլատրուած է ջուրի հրեշտակի ձեին տակ։

Ուրիմն, ըստ Darmesteterի, մեր խարագանին առաջին բառը khara՝ թէ՛ Ավեստայի և թէ՛ Bundahisի (Դ. Ժ. 67-69) համաձայն, առասպելական ճիւազակերպ կենդանի մը ըլլալով ստորոգելիքներունի և յայտնի նմանութիւն կը դիտուի իր գիցարանական տարագին և բնական երեսոյթներու մտացածին գաղափարներու միջնեւ։

Կը զնենք հոռ խար կամ խարախն ըստորոգելիները կամ անոր նկարագրութիւնը, ըստ Bundahis գրոց։

«Կ'ըսեն — 1. — khara կամ՝ kharg կը բընակի ընդարձակածուալ ովկիանոսին մէջ, երեք ոտք ունի, վեց աչք, ինն բերան, երկու ականջ, մէկ եղջիւր, սպիտակ մարմին, ոգելից սնունդ։ խար արդար է։ 2. — Անօր վեց աչքերէն երկուքը կը բռննեն տչքերուն տեղը, երկուքը կը գանուին գըրյուուն և երկուքն ալ ուսերուն վրայ, այս վեց աչքերուն սրութեամբը ան կրնայ յաղթել և կործանել։ 3. — Ինն բերաններէն երեքը զւլմաւն վրայ են, երեքը՝ ուսին, երեքը՝ կողերուն ներքին մասին մէջ, եւ իւրաքանչիւր բերան իր շուրջը ունի հիւղի մը տարածութիւնը և ինքը Alvand (Համատանի մօտ) լերան չափ լոյն է։ 4. — Ուտքերէն իւրաքանչիւրը երը հողին վրայ կը զնէ, հազար ոչխարի հօտ մը անոր տակ կրնայ սեղմուիլ և իւրաքանչիւր ճախան (paturon, ստնակապի տեղ) այնքան մեծ է որ իր շրջանակէն հաղար մարգ՝ հաղար ձիերով կրնայ անցնիլ։ 5. — Անօր ականջները Մազանդարանի չափ ընդարձակ են։ 6. — Եղջիւրը իրը թէ ոսկիէ շինուած է և խոռոչաւոր և ուր բուսուծ են հազարաւոր մեծ ու պղտիկ եղջիւրանման ճիւղեր, ումանք ուղարկ վայել, ոմանք՝ ձիու, ոմանք՝ եղան և ոմանք իշու։ 7. — Այդ եղջիւրով կը յաղթէ և կը ցրուէ այն ամէն վնասակար փառութիւնները զոր յառաջ կը բերեն թունաւոր արարածները։ 8. — Երը նոյն հոռտանի էշը իր պարանոցը վեր կը բարձրացնէ ովկիանոսին մէջ, իր ականջները սարսափ կ'աղգեն և մեծատարած ովկիա-

նոսին բռլոր ջուրերը սաստկութեամբ կ'առ-
լեկոծին, Gianavanid (լեռ մը) կողմը երկերը
կը շարժի: 9.— Երբ ան կ'աղաղակէ՝ Որ-
միզդի ստեղծուածներէն ջուրի էզ արա-
րածները կը յղանան. միևնոյն ժամանակ,
ջուրի բռլոր լիսասակար յդի արարածները՝
երբ կը չափ այդ աղաղակը՝ կը վիճեն:
10.— Երբ ան կը միզէ ովկիանոսին մէջ
կը մաքրուին ծովի բռլոր ջուրերը որ կը
գտնուին երկրի հօթն գաւառներուն մէջ.
— այդ իսկ պատճառաւ է որ բռլոր էշերը
կը միզէն՝ երբ ջուրը կը մտնեն, — առող
համար կ'ընեն հետեւալ կերպով. ԱՌ հ-
առտանի էշ, եթէ ջուրի համար ստեղծուած
չըլլայիր՝ ծովուն ամբողջ ջուրը պիտի կոր-
սուէր այն ապականութենէն զօր կը բերէ
չար ոգիին թոյնը ջուրին մէջ, Արմիզդի
արարածներուն մահուան միջոցաւ: 11.—
Դիմարը միուլի կերպով իր սահմանին մէջ
կը բռնէ ովկիանոսին ջուրը եռոտանի ի-
շուն՝ օգնութեամբը. 12.— Սաթին նկատ-
մամբ այսպէս կը խօսուի, թէ ան եռոտա-
նի իշուն աղբն է, որովհետեւ ան որքան
շատոսկիլից սնունդ ունենայ, այնքան նաև
հեղուկ սնունդին խոնաւութիւնը մարմնոյն
երակներէն կ'երթայ մէզին մէջ, և աղբն
ալ կ'ոչնչանայ:

անառա կամ վասրաւի այս նկարազը-
րութեան մն. հատուածէն երեան կոսպայ
ովկիանոսին մէջ Դիստար զից զործակցու-
թիւնը առասպելական կենդանիին հետ.
Դիստար որ կը յիշուի Ավեստայի մէջ ևս
մեր Տիր զիքն է, և շնիկ աստղն ալ անոր
ներկայացուցիչը երկնից մէջ. Bundahis
գրոց ինչ ինչ մասերուն մէջ ալ կը հաս-
տատաւի Դիստարի կամ Տիր զից անձրե-
ւարեր զօրութեան և ջրոյ պահպանու-
թեան պարագան, «Դիստարը կամ Տիր
կ'աղաշէ Որմիզդին որ յաջողութիւն պար-
գեւէ իրն, և Արմիզդ անոր կը չնորհէ
միևնոյն ժամանակ տասն զօրաւոր ձիե-
րու, տասն ուժով ուղարկու, տասն ցու-
լերու, տասն լեռներու և տասն գետներու
ոյժ և զօրութիւն. այս որ կը լոէ Arash
զել սարսափահար կը պայքարի Դիստարի
ոյժին հետ. սակայն Տիրը կը յաջողի իշ-
խել ջուրին վրայ և կը շինէ առաս անձ-
րեւի հեղեղներ, որոնց կաթիլները ցուլի
և մարդու գլուխի չափ, կը մաքրագործեն
ամէն ինչ: Bundahisի շատ էֆերուն մէջ

այս մտօք բացատրութիւններ պակաս չեն.
արգ, համաձայն այս տողերուն, խարի կամ
խարափ ջուրի մաքրութեան և Տիր զից ալ
անոր հետ զործակցութեան պարագան
յայտնի ըլլալով՝ երկուքն ալ ըստ հեթանո-
սական հաւատոց, կ'աղգին ջուրի վրայ և
անձրեարեր զօրութեան: Այս բացատրու-
թիւններէն հասկնալի է թէ հայերէն խարա-
գան բառին խար բառը կը պարունակէ դի-
ցարանական և օգերեսութական նշանակու-
թիւն մը, ինչպէս ակնարկուեցաւ վերե.
և միևնոյն ժամանակ երեան կ'ենէ թէ
մեր մատենազիրներուն ծանօթ և հայ զի-
ցարանական պանդէսնին մէջ տեղ ունե-
ցող Տիրը կամ, ըստ Ավեստայի, Դիստարը
դիք մ'է և պաշտօն ունի ջրոյ և անձրեւի
տեղացման երկրի վրայ, իշխող մը ով-
կիանոսի ալեաց. և երաշտութեան պաշտ-
օպան զեւերուն զէմ կը մզէ ահաւոր պայ-
քար մը որուն նկարազրութեան կը հան-
դիպինք զարձեալ Ավեստայի կերպին մէջ,
հանդերձ փառարանութեամբ և օրհներ-
գութեամբ, ի զովեստ Տիր զից:

Հայ հին մատենազրութեան մէջ Տիր
զից՝ ջուրի, անձրեւի և ծովու իշխողու-
թեան մասին հայկական զիցարանութիւնը
լուս կը մնայ, թէեւ հայ սամկազիտու-
թիւնը այդ մասին պահած է շատ բան.
այդ նիւթերով զբազող հեղինակները չեն
անդրադամած Տիր զից այդ հանգաման-
քին. մեր խարազան բառին այս ստուգա-
րանական համեստ տողերուն տոթիւ պա-
տեհ առիթ կը նկատենք Տիր զից արդ
հանգամանքը ճշգել հայ ժողովրդային ա-
ւանդութեանց վշրանքներով:

Տիրը մեր հնագոյն պատմիչներու հա-
մաձայն, Արամազդի զպիրն է. աւանդու-
թիւնը կուտայ անոր և Դափիր Գիտութեան
քրմացոյ տիտղոսով, ան աւանդողն է ճար-
տարութեանց ուսումը, երազացոյց և ե-
րազընդհան է: Տիրն էր աստուածներու
և քուրմերու միջնորդ և հրեշտակ,
ան կը յայտնէր երազներու զադանիքը,
կ'ուսուցանէր զիտութիւնները և աստուած-
ներու զպրութիւնը կ'ընէր: Այս յատկու-
թիւններէն մին մինչեւ հիմակ խորհրդաւոր
կերպով մեացած է հայոց պատաւներու բե-
րանը, երբ կ'ըսեն. զրոյլ և տանի, որ ան-
տարակոյ Տիրն է. նմանապէս յարդ մը-
նացած է երազ միկնելու կախարդութիւ.

նը, եղունգին նայելով դռւշակութիւն ընելն եային, որ նոյնպէս հին հեթանոսական հետքեր են: Տիր զից պաշտամունքի տեղն էր Երեանի և Արտաշատի մէջտեղն Երազամյն բառուած աւանը, իսկ անոր պատկերը կը կոչուէր Տրիոփի: Տիրի մասին ուրիշ աւանդութիւններ ալ կան, անոր նուիրուած էր չորրորդ ամիսը, որ բատ հին տարւոյն, Հոկտեմբերի կը համապատասխանէր և կը կոչուէր Տրէ կամ Տրեայ: Տիրը ծագմամբ արիակոն դիցարանութեան կը վերաբերի, և անոր պաշտօնը՝ ուղղակի Պարսիկներէն Հայոց անցած է: Պարսիկք, ինչպէս նաև Հայք Տիրի նուիրուած ամսոյն տասներկուերորդ օրը կը կոչէին Տիրական, որ Արդիզն ևս կը յորջորջի Մուժ և Արան զրոց մէջ, այսինքն ջրախաղորիին, որովհետեւ այս տօնին՝ ոչ միայն վարդ, այլ և սովորուկոն ջուր կը սփռէին Հայք և Պարսիկք իրարու վրայ, ի յիշատակ ջրհեղեղին: Տիրի անուամբ տեղւոյ և մարդու անուններ շատ կան մեր պատմութեան մէջ որոնց յիշատակութիւնը զանց կ'ընենք, ինչպէս նաև երգման և բացազանչութեան այն հնագոյն ձեւերն՝ Տիր զից անունով, որոնք պահուած են աւանդութեանց և լիզուական գանձարաններու մէջ:

Տիր զից մասին մեր այս տողերով մասնաւորապէս կ'ուզենք մատնանշել թէ Պարսիկք նոյն զից աամզոց և անձրեւաց հոգող ալ ճանչնային զՏիր» (Ալիշան, Հին Հաւատֆ Հայոց, էջ 288): Տիրի նոյն հանգամանքին վրայ, որքան որ կը լոէ մեր հին մատենագրութիւնը, բայց պահած է զայն մինչեւ ցայսօր Հայ ուամկագիտութիւնը: Ծիածան կը կոչուի հոսարակօրէն այն անձրեւի և լուսոյ շաղուածն երկնքի թեւէն կախ ձեւացած, գոյնդգոյն բայց սակաւատե կամարը, զոր յետ աշխարհակուլ Ջըրհեղեղին, կ'ըսեն Ս. Գիրք, Աստուած իրքի նշան յիշատակի ցուցոց մարդկոն. «... զաղեղն իմ եղից յամպս . . . » խօսքով:

Ռամկագիտութիւնը ծիածանը կը կոչէ նաև ծիրանի զօհի, կանանէ կարմիր զօհի, երկան զօհի, անանակ՝ (հոււանարար աղեղնակ), բատ Անանիս Ծիրակցւոյ կոչուած է նաև Աստուածականար, հաւանարար քրիստոնէից կողմէն, ինչպէս հիմակ ալ ուամիկներէն կ'ըսուի Աստուածածի զօհի, բայց

ծիածանի օգերեսութիւն ուշադրութեան առանուելիք անուանակոչութիւնն է, ըստ հայ ռամկագիտութեան, Տիրկամ կամ Տիրական զօհի ասացուածքը, զոր հին հայերը կուտային ծիրանի զօտիին, և աւելի հին անձանօթ կրօնից աւանդութեամբ ո: Ահա գրտկանութեան պակասը կը լրացնէ ռամկագիտութիւնը իր պահպանած գեղեցիկ բառովն ու կը հասկցնէ թէ Տիր զիք կը հոգայ ամպը և անձրենները, ոսոգելու համար ցամքած հողերն ու արտերը:

Տիրական զօհի աւանդական ասացուածքին նկատմամբ կը վկայեն յիշախն գարումատենագիրներէն ոմանք, ինչպէս և տումարն: «Տիրական զօտի կոչեցեալն՝ չուրջ զարեգակումբ երեւեցաւ զօրն ամենայն»: այսան Տէրունական զօտուոյն . . . յոյժ անցիտքն ասացին զօտի աստուածականն: Ծիածանի մասին ակնարկութիւն ունի նաև Թովմաս Արծունի, ոգոր ասացին որդիք տարրապաշտիցն՝ զօտի Արտամզգայաց (տե՛ս Հ. Բ. Սարգիսիանի Ազարանեղուն ևայլն, էջ 152): Տիրական զօտիի նկատմամբ հայ յողովուրդը կ'ընծայէ պէս պէս մողական զօրութիւններ և յօրինած է շատ զրոյցներ՝ որոնցմէ ոմանք պահուած են գաւառաց մէջ. մասնաւորապէս Տիրակի և Արքաստիոյ մէջ կ'ըսեն. «Եթէ տղաք անցնին այդ զօտուոյն տակէն՝ իսկոյն կը ծերանան, և ծերք՝ մանկութիւն կը պղենուն, կանոյք այր մարդու կը փոխուեն, և այրերն ալ՝ կանանց» (Եղյն, էջ նոյն: «Գ. Արկ.ի Փշրամի Ծիրակի ամրաւնուրից, էջ 197): Սիրաստիոյ Հայերը քաղաքին զիմացը (Ալիսէն անդին) իշխանի կոչուած լեռնամէջ հայ զիւղը ուխտի կ'երթան Մայիս 7ին, մասաղներ կ'ընեն, աղաւնիներ կը թոցնեն (այս պատճառուակարաբնի տօն ալ կը կոչուի այս օրուան հանգէսը), նոյն օրը եօթն անգամ կ'անձրեւէ, եօթն անգամ կ'արեւէ, և այդ օդին փոփոխմամբը ծաթած ծիրանի զօտիին տակէն անցնող մանչը աղջիկ կ'ըլլայ, աղջիկն ալ մանչ (Գրաւոյ Տեղեկուրիսն Կ. Գարիկիանմի):

Հայ ժողովրդեան ռամկագիտութիւնը տարակոյս չկայ թէ մեծապէս պիտի լուսարանէ հայ մատենազրութեան և հայ հեթանոսական հաւատքի անյայտ մնացած կէտերը, ուստի ջանալու ենք հրատարակուած ռամկագիտական պատրաստ նիւթերը և մի հաւաքել, և գաղութիւններու հայ ժողովրդեան մէջ ռամկագիտական պրպըտումները շարունակել հայ մշակոյթի նոյն գանձերը կորուստէ փրկելու համար:

ՄԿՐՏԻՉ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒԽԻՆ: